Ձև N 2

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անուն, ազգանուն** - Արուս Թումանյան
2. **Զբաղեցրած պաշտոնը** - ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները**. – Պեկին, Լուոյան, Ցզյուան 14.10 (12.10) – 28.10.2026թ.
4. **Հրավիրող կողմը** (առկայության դեպքում). – Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետություն
5. **Գործուղման նպատակը** – «Չինաստանի հանքարդյունաբերության կանաչ կայուն զարգացում» Հայաստանի համար թեմայով սեմինարին մասնակցություն
6. **Քննարկված թեմաները** (հարցերը)- Չինաստանի և չինական արդիականացման ընդհանուր ակնարկ, «Մեկ գոտի, Մեկ ճանապարհ» նախաձեռնությունը և համագործակցությունը Եվրասիական երկրների հետ, Չինաստանի ղեկավարների՝ պետական կառավարման վերաբերյալ հայեցակարգը, այցելություն Կոմունիստական կուսակցության պատմության թանգարան, ծանոթացում պատմությանը, ընթացքին, կառավարման տարբեր ժամանակարջաններում՝ մինչ արդի ժամանակներ, Չինաստանի գունավոր մետաղների արդյունաբերության զարգացումը և հայ - չինական հարաբերությունների հեռանկարները հանքարդյունաբերության ոլորտում, Հանքավայրերի անվտանգության կառավարում և մշտադիտարկման խելացի տեխնոլոգիաներ, «Կանաչ» հանքավայրերի կառուցում և հանքային հումքի խելացի վերամշակում: Տեղական կադրերի պատրաստում՝ հանքարդյունագործական օտարերկրյա ընկերությունների համար:
7. **Հանդիպումները, ելույթներ, բարձրացված կամ քննարկված թեմաներ**- Հայաստանի խմբին դիմավորել է **Չժոու Վզնին**՝ առևտրի նախարարության միջազգային գործարար պաշտոնյաների ակադեմիայի արտաքին օգնության ծրագրերի իրականացման առաջին բաժնի համակարգող: Ողջույնի ելույթով հանդես է եկել **Ցզին Սյոլուն**՝ օտարերկրյա օգնության ծրագրերի իրականացման առաջին բաժնի պետի տեղակալ: Հայկական կողմից ելույթով հանդես եկան. **Արթուր Ղավալյան**՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության Ռազմավարական ոլորտների վարչության Ծանր արդյունաբերության բաժնի պետ, **Սեդա Հակոբյանը**՝ ՀՀ ՏԿԵՆ ընդերքի վարչության ընդերքօգտագործման ոլորտի քաղաքականության մշակման բաժնի պետ: Հանդիպումներ եղել են այցելությունների շարքում ներառված բոլոր ընկերություններում և ուսումնական հաստատություններում՝ ղեկավար կազմի հետ, իսկ պատմամշակութային վայրերը կրել են ուսուցողական բնույթ:

Այցելություն Չինալկո Լուոյան կոպեր ընկերություն՝ պղնձի կանաչ և խելացի արտադրություն, այցելություն Չինաստանի գունավոր մետաղների մշակման տեխնոլոգիաներ իրականացնող ընկերություն՝ գունավոր մետաղների մշակման կանաչ վերափոխում: Այցելություն Լուոյանի տեխնոլոգիական ինստիտուտ, որտեղ պատրաստում են կադրեր հանքարդյունաբերության ոլորտում աշխատելու նպատակով: Այցելություն Լուոյանի Լունմեն քարանձավներ, որը թանգարան է բաց երկնքի տակ՝ Բուդիզմը խորհրդանշող: Այցելություն Խուաշի գյուղ, ծանոթացում գյուղական կյանքին և զբաղվածությանը: Այցելություն Ցզյուանի մասնագիտական տեխնիկական իստիտուտ, որը պատրաստում է կադրեր օտարերկրյա նախագծերի համար: Այցելություն Henan Yuguang Gold & Lead Co. ընկերություն, որտեղ իրականացվում է կապարի, ցինկի և պղնձի համալիր վերամշակում: Այցելություն «Չինական պատ», որպես մշակույթի կարևորագույն բաղադրիչ մաս և սահմանազատում հարևան երկրների հետ:

8. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**- Ստորագրված փաստաթղթեր չկան: Որոշվել է վերադասների հետ քննարկել ուսումնական հաստատությունների կողմից առաջարկվող՝ ուսանողների կրթական ծրագրերի և վերապատրաստումների հարցը:
9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները** – Առաջարկվել է նմանօրինակ ծրագրում ներառել հանքարդյունաբերական տարածքների այցեր, ինչպես նաև արդյունահանումը ավարտած և ռեկուլտիվացիա իրականացված տեղանքներ, որը էլ ավելի նպատակային և արդյունավետ կլինի սեմինարի լիարժեքությունը ընդգծելու համար:
10. **Ստորագրությունը, ամսաթիվը**

Գործուղվող՝ Ա. Թումանյան

02.11.2026թ.